


ԱՄԵՆՈՅՆ ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՔ
Պարսին ուղղութիւն առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅՔ»-ի
ՏՈՒՐ. Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ.



HAIK
ARMENIAN POLITICAL AND
HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A
To whom all communications must be
addressed.
Terms for all Countries.
One Year - - - - \$ 2.00.

Ձեռագիրք Ձեռն Վերադարձուի
—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրաց համար
ԵՐԶՈՒՆ ԵՐԶՈՒՆ ԵՐԶՈՒՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ և ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M. D.

Տէր-Խմբագիր—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա. ՏՄՐԻ

ՆԻՒ ԵՌՐԻ

ՕԴՈՍՏՈՍ 1 1891

ԹԻՒ 15

Entered as second-class mail matter. at P. O. New York.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բողոք — Եւրոպայի Կոնգրէսի Տնօրէն
Բողոք — Տնօրէն Պատասխան — Կոնգրէսի
— Կեդրոնական Յանձնարար — Ինքնիշխան
— Հայեր յԱմերիկա — Հրէայի եւ Ինքնիշխան
— Կանոն — Հայաստանի Բնակչութեան Ի Կրօն
— Եւրոպայի Բողոք — Եւրոպայի Օրէն — Կոնգրէսի
Եւրոպայի Եւրոպայի — Եւրոպայի Եւրոպայի

ԲՈՂՈՔ

Խուժի իւր խանչեալ, դուժն ետեւորան և զօրք
Հրապարակ

Առաւ զարնեն ընեն մեր հէք աղղ յիրուցան.
Գրաւեն գիւղեր, աւրեն աւան, քանդեն վանքեր,
Պղծեն պատիւ, սրբարան, խաչ, իսկ մեք, Հայեր,
Մեք ի՞նչ կ'ընեմք դեռ:

ԴՈՒՄԻՆ Ժողով ու խաղ ընէ ժողով և Պատրիարք.
Մինչեւ Ֆէզդան աքսորուին մեր անմեղ եղբարք,
Յերուսաղէմ ուրբ Հայրենեայ Սուրբ Հայրիկ մեր,
Բանաւերն լեցուն են անմեղօք, իսկ մեք, Հայեր,
Մեք ի՞նչ կ'ընեմք դեռ:

Մեծ Պետութիւնք անկարեկիր, փոքունք՝ անկար,
Եւ Դաշնագիր իսկ Պէռլինեան է մեռեալ տառ,
Կ'ընեմք չկայ օտարէն ճար, Հայ բազումներ
Պիտի փրկեն զՀայաստան, և սակայն դեռ.
Ի՞նչ կ'ընեմք, Հայեր:

Ի՞նչ կ'ընեմք, դեռ. — Ուսէ եղբայր զմիս եղբոր.
Սա դաւ լարէ, նա մուր քրտէ ասոր անոր.
Միւսն նախանձու խոթէ խանչեալ և կարեւոր
Խոցէ աս ան, բայց կոչուի դեռ մեծ ազգասէր.
Ամօթ չէ՞, Հայեր:

Մին կ'ընէ եւս, իսկ միւսն պօռայ «ԵՍ, ԵՍ, ԵՍ, ԵՍ»,
Ոչ խելացի, ոչ ազգասէր կայ ինծի պէս.

Խրատը քեզի, խելօք եմ ես, դրամ տուր ինձ դրամ,
Ծով եմ, ծով եմ, գիտեմ կարեմ ես ամէն բան:
Հայեր, պատասխան.

Կուսակցութիւն չունիմ ես, չեմ ... ունի ... ցի,
... եան,
Ես սկզբունք պաշտեմ ոչ զայս անհատ կամ զայն.
Հայ եմ ես ՀԱՅ, Իմ Հայրենիք է ՀԱՅԱՍՏԱՆ —
Գոչեմք ամեն և միանանք ի մի ԿԵՂԻՐՈՆ,
Փութա՛նք, Հայեր, Օ՛հ:
25 Յուլիս 1891 Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԵՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ԱՌ

ՏԵՐԵՄ Մ. ՉԵՐԱԶ

Ահաւասիկ օրինակն նամակին զոր ուղղեցինք առ
Փրոֆ. Տնօրէն Պատրիարք՝ նորա ծննդեան Յորդ տարեդար-
ձին առթիւ:

Սիրելի բարեկամ և յոյժ պատուարժան եղբայրակից,
Ձեր ծննդեան Յորդ տարեդարձն ի 15 Յուլիս
ամսոյս՝ պատեհ առիթ կընծայէ ինձ ըսելու ձեզ որ ինչ
այնքան յաճախ կը կրկնեմ այլոց — թէ դուք ձեր բար-
ձր տաղանդով պատիւ կը բերէք մեր ցեղին և Ձեր
Հայրենասիրական իմաստուն գործունէութեամբ յոյս կը
ներշնչէք Ազգին:

Դուք որ իբրեւ մատենագիր և ուսուցիչ այնքան
բարձր դիրք արժանապէս գրաւած էիք Ազգին մեծա-
գոյն կեդրոնին մէջ՝ ի Կ. Պոլիս, ինքնայօժար թողուցիք
թողալ և ամեն ինչ, և խորտակելով ոսկեղէն գայլն որ
անմոռուն կը պահէր զՁեր պերճախօս լեզու, նետուե-
ցաք ի Մեծն Բրիտանիա, ուրկէ ազատօրէն կը մոնչէք
թէ Հայաստան կը նահատակուի:

Ձեր ձայն հեղինակազօր է: Դուք 1878 էն ի վեր
անդադար զբաղած էք Հայկական Խնդրով: Դուք ջուր
տուիք մեր Ազգային Դատի երբ այն հազիւ կաղին մ'էր
դեռ. Դուք այնմ փարած կը կենաք այժմ երբ արդէն
կաղնի մ'եղած է այն. ապրի՛ք այլ շատ տարիներ և
տեսնէք զկաղնին անտառ եղած — Հայ զօրութիւններն
խմբուած և կազմակերպուած. Վան, Մուշ, Կարին ինք-
նօրէն եղած և ազգն իւրուրոյն ուղղութեամբ քաղաքս
կրթութեան ուղւոյն մէջ արագընթաց:

Յամայր ամս ապրիլի Դուք, ո' արժանի որդի Ներ-
սէսներու և Սահակներու:

Սրտագին Սեղմելով Ձեր աջ,

Ազնիւ և Սիրելի եղբայրակից իմ,

Կը մնամ Ձերդ անձնուէր

Մ. Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Տնօրէն և Խմբագիր

«Հայք»ի

Եւ ահաւասիկ Տիար Ձերագի համեստ պա-
տասխանն:

Լոնսոն, 9 Յուլիս 91

Ազնիւ պաշտօնակից և սիրելի բարեկամ,

Շնորհակալ եմ Ձեր մաղթանքներէ և
Ձեր խրախուսիչ համակրանքէ: Ծառայելով Հայութեան
ըստ կարի, կատարած եմ պարտաւորութիւնս միայն,
որպէս կը կատարէք Դուք այնքան խանդով և տաղան-
գով, որպէս կը կատարեն մեր համայն հայրենասէրներ,
ոմանք ճակատաբաց և շատեր քողի տակ, Հին Աշխարհին
և Նորին մէջ: Մաղթելով որ Հայաստանի Աստուածն
արդիւնաւորէ այս բոլոր ճիգեր, կը մնամ միշտ

Ազգիս և Ձեզ անձնուէր

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

ՆԱԽԵԱ Կ. ՊՈԼՍԷ

Բարեկամ,

Կ. Պոլսոյ և Վիէնայի կառավարման կողմաւորե-
լուն լուրն անշուշտ հինցած է այդ կողմի համար ալ.
բայց կարելի է չեղեակային այս երկրէն շատուց հեռա-
ցած մեր հայրենակիցներ թէ այն դէպքին ազդեցութիւնը
Տաճիկներու վրայ ինչ եղաւ: Մոլլայական և բարեպաշտ
Հին գլուխներն կ'ըսեն թէ երկաթուղին մեղքի դուռ է,
Աստուծոյ դէմ ապստամբութիւն է, Կեանքի հնարք է.
Ալլահը երկիրն ասանկ է ստեղծեր որ մարդս զառիվեր
և զառիվար քաղելով, երկար կամ դժուար ճամբոր-
դութեամբ համբերութեան վարժուի: Անցեալ աւուր ա-
ւազակութեան դէպքն Խիւտաին խրատն է առ իւր իսլամ
ժողովուրդն որ ետ կենան դիւային «Հիւնէր»ներէ. և ի՞նչ
կայ, ըստ սոցա, աւելի դիւային քան արաբներէս և ա-
ճապարող չոգեկառքն. «Աճէլէ մին իշլէյթան» այսինքն
«աճապարանքն սատանայէն է» չըսեր առածը:

Արարիոյ մասնակի ապստամբութիւնն շատ կը
նեղէ Սուլթանին սիրտն: Թերթիդ Եդ. Թիւրին մէջ, խո-
սելով Սուլթան Համիտ Բ. ի և Օսմանեան Պետութեան
վրայ, կ'ըսիր թէ «... հարկ է որ Արարիոյ ևս ինքնօրի-
նութեան փոքրիկ աստիճաններ շնորհուին ինչ ինչ անհա-
ճոյ պատահականութեանց առջեւն առնելու համար»:
Սուլթանն սիրող է չոգեքորթութեան, և ականջ չունի
այսպիսի խորհուրդներ լսելու: Նա չճանաչեր իւր հպա-
տակ ցեղերու առանձին և որոշիչ հանգամանքն և ըստ
այնմ չվարուիր անոնց հետ: Հայն ու Արաբն կ'արհա-
մարհէ, իսկ ցեղերու էն ստորնագոյնն եղող Բուրդն կը
պատուէ:

Թերթիդ մէջ տնտեսական լրոյց համար ալ տեղ ու-
նիս, անանկ չէ: Այս տարի Պոլսոյ մէջ նմանն չտեսնող
արագութեամբ սնանկութիւնք սնանկութեանց յաջոր-
դեցին և հրապարակն սոսկալի ցնցումներ կրեց: Փճացած
գումարն 500,000 լիրան կ'անցնի: Սնանկացողներն կըր-
նանք երեք դասի բաժնել. նախ ճախողութեամբ սնան-
կացողներ. երկրորդ չոպուլութեամբ և անպարկեշտու-
թեամբ սնանկացողներ. երրորդ չափազանց պարկեշտու-
թեամբ սնանկացողներ: Խարդախութեամբ սնանկու-
թիւն հրատարակողներն առաջուց երկարօրէն ամեն բան
պատրաստած են և միայն առթի կը սպասեն. երբ ժողո-
վուրդն սնանկութեանց լուրեր յաճախ լսելու կը վար-
ժուի, խորդախներն ալ պատահ ժամն եկած կը սեպեն

սնանկացելոյ բաղմութեան խառնուելու: Չափազանց
պարկեշտութեամբ սնանկացողներն ալ այն հազուադիւ-
րարի մարդիկն են, որք ուզողին տուած են, բայց իրենց
պահանջներն բաւական խստութեամբ դանձած չեն: Ըստ
պարագային խաթր կոսրելու կամ խիստ լինելու անկա-
րող մարդն մեր դարուն մէջ գործ չկրնար ընել: «Ոչ
այնքան քաղցր եղիր որ կլանեն, ո'չ այնքան դառն որ
թքանեն» լաւ ըսած է այն որ ըսած է: Ինծի միշտ պատ-
ուէր կուտաս որ խիստ չգրեմ, հարուածող չըլլամ. չը
չափազանցեմ: Շատ աղէկ պատուէր: Բայց ես ալ քեզ
խրատ մը տամ: —

Թերթիդ ամէն մէկ օրինակն որ Պոլիս կուգայ,
հարիւր կամ երկու հարիւր մարդ կը կարգայ կրնամ ը-
սել, և ապահով կերպով: Ընթերցողներն ընդհանրապէս
մշակուած և բանիրուն մարդիկն են. քաղաքականութեա-
նըդ շատ կը հաւնին, ոճիդ կը դմային. բայց...

Չափի բարկանաս, այնպէս չէ:

Բայց լեզուդ հասարակութեան համար քիչ մը չա-
փազանց բարձր է. կամ թէ մանաւանդ էր, վերջերս
բաւական փոխուած է: Բայց — և աս է բայցերուն մե-
ծագոյնն — չափազանց բարի վաճառականին նման, խա-
թըր կոսրելու անկարող ես. թերթերն քեզ կը քաշքշեն
բացարձակ անիրաւութեամբ, դու, քեզ յատուկ հպար-
տութեամբ ես ըսեմ, դու ըսէ վեհանձնութեամբ, կը
լռես: Բու դիրքդ ազնիւ է, բայց մեր ժողովուրդն ըլլալդ
հասկանալու կարող չէ առ այժմ: Քաղաքավարութիւնդ
երկչոտութիւն և արհամարհոտ լուրթիւնդ պապանձում
կրնան կարծել շատ պարզամիտներ:

Դաւով դարձեալ քաղաքականութեանդ, Ազգա-
յին Դատին խորին նշանակութեան և բնութեան վրայ
ըսածներուդ, ուժերն կեդրոնացնելու մասին ջատագո-
ւութեանդ, հոս առհասարակ կը հաւնին, ինչպէս ըսի:
Ասկէ տարիներ առաջ, մինչդեռ ժողովուրդն քնացած
էր, կարելի է գրգռող թերթ մը օգտակար ըլլար.
բայց այժմ որ իւր ստրկական անտանելի վիճակին բարկ
զգացումն ունի, անոր պէտք եղածն մտրակ չէ, զօրու-
թիւն է. գրգռ չէ, խորհուրդ է. ցոյց չէ, խորագիտու-
թիւն է: Ազգն տեսած է իմաստութենէ թերի գործիչ-
ներ որք աւելի եռանդ ցուցած են քան տաղանդ, և ա-
ւելի փնաս ըրած են քան օգուտ: «Միացեալ Ընկերու-
թիւնք» ուսուցիչներ զրկեցին Գաւառներն, որոց պաշ-
տօնն էր ուսուցանել և մշակել ժամանակին պահանջած
խոհեմութեամբ. բայց անոնցմէ մէկ քանին, մասնա-
ւորապէս Պ. Փորթուքալեան այնպիսի ընթացք մը բռն-
եց որ չէ թէ միայն ինք կասկածելի եղաւ, այլ և
«Միացեալ Ընկերութիւնք»ն կասկածելի ըրաւ Կառավա-
րութեան: «Միացեալ Ընկերութիւնք» կրկին և կրկին
հրահանգ տուին նմա զգուշաւոր ըլլալու, բայց շատ օ-
գուտ չեղաւ, և քիչ մնաց որ Ընկերութիւնն իսկ կոր-
ծանուէր: Նոյն կրիւք և եռանդեամբ հրատակել սկսաւ
«Ասիա» թերթն Պոլսոյ մէջ, և սակայն շատ չտեսնեց
բարեբաղդաբար: Եւ գիտէ՞ք ո'վ եղաւ այդ թերթին խա-
փանման պատճառն — նոյն ինքն Ներսէս Պատրիարքն:
Սա ֆնասակար համարեցաւ Ազգային Դատին այնպիսի
թերթ մը, որոյ խմբագիրն զուրկ ամենայն քաղաքա-
գիտական խորութենէ և դիւանագիտական ճարտարու-
թենէ, կարծէր թէ մեծ բան մ'ըրած կ'ըլլար եթէ իր
զգացմանց և ցուերուն ազատ ասպարէզ սար թերթին
մէջ, և ամեն բան ըսէր անանկ ոճով և կերպով որպէս
թէ չարիքներն դարմանելու համար պակասող բանն չէթէ
Դրան կամքն և կարողութիւնն լինէր, այլ չարիքներուն
անծանօթ մնացած լինելն:

Մի' վաճառիր, յառաջ գնա, թերթդ ապագայ ու-
նի: Վստահ եղիր թէ Ներսէս իւր գերեզմանէն կ'օրհնէ
զքեզ և քեզ նմաններն, որք քաջ են առանց կռուատէր
ըլլալու, և խոհեմ են առանց վախկոտ լինելու:

ԱՆԵՐԵՒՈՅԹՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

Հ. Հ. Յանձնախումբն Նիւ Եորքի Հաճութեամբ
Հրատարակութեան կուտայ Հետեւեալ Համառոտութիւ-
նըն այն երկար նամակին զոր ընդունած է Նիւ Հէյվընի
Հ. Հ. Յանձնախումբն ի պատասխան իւր շրջաբերականին:

Նիւ Հէյվըն, Յունիս 22, 1891

Մեծ. Տէր.

Ձեր շրջաբերականն ներկայացուցաւ այսօր մեր
փոքրիկ զաղթականութեան և հետեւեալ որոշմունք
ընդունուեցան:

Ա. Շնորհակալութիւն պարտիմք յայտնել Ն. Եոր-
քի Հ. Հ. Յանձնախումբին նաեւ «Հայք» յարգելի խմբա-
դրին որք ձեռնարկած են և կ'առաջնորդեն այժմիկ կաղ-
մակերպել մարմին մի որ անհրաժեշտ պէտք մը կը նը-
կատուի Հայ ազգին ներկայ դժուարին կացութեան մէջ
— Կեդրոնական Յանձնախումբն:

Բ. Յարմար դատեցինք զամբողջ կաղմակերպու-
թիւնն երկից կարգաց բաժանել. 1. Ամենայն Հայոց Կեդ-
րոնական Յանձնախումբն, որ ամբողջ գործոյն վերին
վարչութիւնն կը ստանձնէ: 2. Նահանգային Յանձնա-
խումբ, որ իւր աշխարհի տեղական Յանձնախումբոց
վրայ վերատեսչութիւն կը ստանձնէ և զանոնք կը ներ-
կայացունէ առաջի Կեդրոնական Յանձնախումբին: 3. Գա-
ւառային մարմինն կամ տեղական Յանձնախումբ, որ
իւր տեղական գործովք կը զբաղի:

Գ. Մեք մեր կողմանէ կ'ընտրեմք Նիւ Եորքի Հ.
Հ. Յանձնախումբն իբրեւ Ամերիկայի Տեղական Յանձնա-
խումբոց ներկայացուցիչ, այսինքն «Նահանգային Յանձնա-
խումբ»:

Դ. Ամեն տարի ընդհանուր ժողով կազմել հարկ
է: Բայց

Ե. Անցիւր Աշխարհի Նահանգային Յանձնախումբ-
ընն պարտի նկատուիլ իբրեւ մասն միւր ընդհանուր ժողո-
վոյ, որում պատասխատու կը լինի Կեդրոնական Վար-
չութիւնն, թէ և վարչական գործոց մէջ այն հը
պատակ լինի Կեդրոնական Յանձնախումբին: Իւրաքան-
չիւր Նահանգային Յանձնախումբ կ'ընտրէ պատուիրա-
կութիւն մի որք մի կամ երկու տարին անգամ մի կը
յղուին ի կեդրոն և այսպէս կը ներկայացունեն բովան-
դակ ընդհանուր ժողովը:

Զ. Կեդրոնական Յանձնախումբի ընտրութեան կը
մասնակցին ամենայն Հայք: Տեղական Յանձնախումբք
քուէարկութեան հաշիւն ճշդիւ կը յղեն Նահանգային
Յանձնախումբին, և սա՝ Կեդրոնին:

Է. Մինչդեռ Կեդրոնն կազմուած չէ, Նիւ Եորքի
Հ. Հ. Յանձնախումբն այս անգամուան համար միայն
քուէարկութեանց հաշիւներն ընդունի:

Ը. Նահանգային Յանձնախումբն իւր աշխարհի
1000 քուէին համար մէկ պատուիրակ ընտրէ, և սակայն
կրնայ ընտրել զայն Տեղական Յանձնախումբոց անդամնե-
րէն, կամ Կեդրոնանիսք քաղաքին մէջ բնակեալ անձ մի:

Թ. Երբ Կեդրոնական Յանձնախումբն կազմուի,
նա պատուիրակաց հետ խորհրդակցութեամբ՝ յօրինէ
Սահմանադրութիւն մի:

Ժ. Շրջաբերական Մրազրին Ա. Բ. Ե. Զ. Է. յող-
ուակներն կ'ընդունին Նոյնութեամբ: Դ. և Ը. յող-
ուածքն պիտի մեկնուին յետ կազմութեան Յանձնախում-
բոց:

ԺԱ. Կեդրոնական Յանձնախումբն բաղկանայ առ
նուազն հինգ անդամներէ:

ԺԲ. Ըստ մեզ Լոնտոն յարմար է Կեդրոնանիստ
լինելու:

ԺԳ. Պատուիրակք ընդհանուր գումարման մէջ
սչ միայն պիտի քննեն Կեդրոնին տեղեկագիրներն այլ և
խորհրդարանաբար պիտի քննեն Հայկական խնդրոյն այլ
և այլ կէտերն:

Տէ՛ր, ազգաց փրկութեան համար միութեան ըս-
կըրունքն անհրաժեշտ է. ուստի առանց վատելոյ յա-
ռաջ մղեցէք զգործս զայս սուրբ:

Մնամք, Տիար Ասենապետ, Ձեզ աջակից
Ի դիմաց զաղթականութեանս
Ասենապետ
Ա. Ա.
Գ. ՅԱՐՈՒԹԻՒՆՆԱՆ

ԲԵՐԵՆ ԼՈՍՏՐԵՆՍ

Շատեր մեզ հարցած են իշխան Լուսինեանի վե-
րայ: Հետեւեալ տեղեկութիւններն քաղելով Ֆռանսա-
կան թերթէ մի, կը հաղորդեմք մեր ընթերցողաց:

«1192 էն ց 1473, Լուսինեանք կրած են ար-
քայական երբեակ թագն Երուսաղէմի, Կիպրոսի և Հա-
յաստանի: Այս ընտանեաց կրտսեր գծին պետն է այժմ
իշխան Կիւյ տը Լուսինեան, բնակեալ ի Փարիզ: Նորին
Արքայական Բարձրութիւն ծնեալ է ի Կ. Պոլիս 1834ին:
Յաճախած է վեհեակոյ և Փարիզի Համալսարաններն, և
այս վերջին մայրաքաղաքին մէջ է որ նա վարած է Հա-
յոց բարձր Վարժարանին վերատեսչութիւնն:

Նշանաւոր առաջնորդն, Տ. Խորէն Լուսինեան,
իշխանազն Արքեպիսկոպոս Պէշիկթաշի, մին Պէշիկթեան
վեհաժողովոյ անդամոց, մեծանուն գրագէտ, բանաս-
տեղծ և դիւանագէտ, է եղբայրն իշխան Լուսինեանի:

Իշխան Կիւյ տը Լուսինեան ականաւոր գրա-
գէտ մ'է և հանրութիւնն շատ լաւ ընդունելութիւն ը-
րած է այն երկասիրութեանց զորս հետ գլխաւէ հրատա-
րակած է նա, ինչպէս ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ,
վեց հատոր. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆՆ, ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆ
Հայերէն և ուրիշ մի քանի լեզուներով, ՀԱՅԵՐԷՆ ԳԵ-
ՂԱԳՐՈՒԹԻՒՆՆ, ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ, ՀԱՅ—ՖԸ-
ՌԱՆՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆՆ, և ուրիշ մ'ալ Ֆռանսերէն—Տաճ-
կերէն: Իշխանն Ֆռանսերէնէ ի Հայ թարգմանած է
Ֆէնէլոնի ՏԵԼԵՄԱՔՆ, Պէշեառտէն տը Սէն-Փիէռի ՊՕՂ
և ՎԵՐԳԻՆԷՆ, Ֆէնէլոնի ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՂՋԿԱՆ-
ՑՐԷՆ և ևս եռանգուն Տնօրէնն եղած է Հայ-Ֆռանսերէն
Հանդիսի:

Իւր որդին, երիտասարդ իշխան Լեւոն, որ
յաջողապէս ուսած է ի Ֆռանսա, յԱնգղիա և ի Գեր-
մանիա և արժանապէս վարած է դիւանագիտական պաշ-
տօն ի Կ. Պոլիս, կը հետեւի իւր մեծանուն հօր գրական
շաւղաց: Արդէն երեւելի մատենագիր մ'է նա:

Մեծ Հայ թերթ մի, որ Ֆռանսերէն լեզուաւ
կը հրատարակուի, կրցած է ուրեմն գրել՝ խօսելով իշխան
Լուսինեանի վերայ. «Նա անխոնջ և սաղանդաշատ աշ-
խատող մ'է. եթէ բոլոր իշխանք իրեն պէս ընէին, մար-
դիկ պիտի ներէին իրենց իշխանազուն ծնունդն»:

Իշխան Կիւյ տը Լուսինեան, ըսած է մին իւր
կենսագրաց, կատարեալ ճէնթը մէն մ'է. նորա ճակատ
ցուցիչ է բացառիկ իմացական կարողութեանց. նորա
աչեր անհուն նրբութիւն մ'ունին, յորոց ի խորս, գերդ-
կապուտակ հոգիդոն, կը ճաճանչէ մեծ բարութիւն...
Ամեն անոնք որք նմա մեծենալ կրցած են, ի սրտէ պի-
տի համաձայնին այս բանից:

Իշխանին աղքատասիրութեան, անընկրկելի
անձնուիրութեան առ թշուռս՝ հաղորդ էր նաեւ իւր նը-
շանաւոր ամուսինն, Նորին Արքայական Բարձրութիւն
իշխանուհի Մարիամ տը Լուսինեան, ծնեալ Կոմսուհի
Կոտֆրուայ տը Կուփիլ: Մեծ քաղաքին աղքատներն
քաջ գիտէին ճամբան այն ապարանաց, որոյ դրունք
լայնաբաց մուտ կուտային թշուառաց և դժբաղդից:
Բազում բարեսիրական հաստատութեանց հեղինակն և
ողին եղած է իշխանուհին:

1878էն մինչև ցմահ իւր՝ Վիգթոր Հիւկօ դրա-
ցի էր Լուսինեանց: Մեծանուն բանաստեղծն գիտցած էր
գնահատել և յարգել արքայազուն Տիկինն, և իւր Էմիլիանի
երկին յիշատակին տաթիւ, գրեց իշխանուհոյն մին ի

գեղեցկագոյն նամակացն որ երբէք ելած են իւր գրչէն . — «Մեր երկուքի հասակաց միջև, Տիկին, էռնանի յիսնամեկի մի տեղ կայ : Իմ ութսուն ամբ կը մատուցանեն իրենց յարգանքն Ձեր երեսուն ամաց, և իմ ծերունական չրթունք կը համարեն Ձեր ձեռք : — «Վիզթոր Հիւկո :»

Անցեալ տարւոյ Սեպտեմբեր 24ին, յորժամ իշխանուհին ի Հուլիաթ կը գտնուէր օգտփոխութեան համար, վախճանեցաւ ի հասակի 43 ամաց՝ վաղահաս մահուամբ մի զոր ոչ ինչ թոյլ կուտար նախադուշակել : Իշխանուհոյն մարմինն ամփոփեցաւ ընտանեկան դամբանին մէջ ի Փէն-Լաշէզ : Նորա յիշատակ անջինջ պիտի մընայ իսիրտ այն թշուառաց որոց նախախնամութիւնն էր նա

ՀԱՅԵՐ ՅԱՄԱՆՈՒԹԵԱՆ

Ամերիկամոլութեան ախտն Տաճկաստանի մէջ տարածելու սկսողներն Հայերէն ոմանք եղած են : Սոքա Թուրքիոյ և Ամերիկայի բազմաթիւ շատ սըխալ եղանակաւ ընելով, Ամերիկայէն գրած են իրենց բարեկամաց որ Տաճկաստանն, այն աղքատ երկիրն, թողուն և գան յԱմերիկա, այս կաթ սև մեղր բղխող երկիրն, որ ծաթի ու ոսկիի աշխարհն : Ոմանք անգիտութեամբ և ոմանք գիտութեամբ այսպէս չափազանցած են այս երկրին մէջ հանգիստ և հարուստ լինելու գիւրութիւններն և պատճառ եղած են որ յԱմերիկա գան անանկ Հայեր, որք եթէ իրաց ճշմարիտ վիճակն գիտնային՝ իրենց տեղէն չէին խլրար :

Տաճկաստանի մէջ գործաւորութեամբ, սպասաւորութեամբ, բեռնակրութեամբ, դատարկաշրջութեամբ, զբաղօտութեամբ, կամ ապարդիւն և անհիմն գործերով օրինակի համար սնտի սեղանաւորութեամբ և կառավարական ծոյլ պաշտօններով մարդիկ շատ կան, որք ոչ դրամադուլիս ունին, ոչ հող, ոչ արուեստ, ոչ ապագայի յոյս : այսպիսիներ եթէ ազդուելով հեռուէն կարմըրուկ ներկայացուող բաներէ՝ Ամերիկա գային բազմ փորձելու, այնքան չէինք զարմանար, թէ և շատ կրնային ցաւիլ և զղջալ երբ միանգամ Ամերիկայի մէջ գործ գտնելու և գործին վարձուելու դժուարութեանց համար առնուին : Բայց որքան զարմանալի և ցաւալի է տեսնել Հայեր որք թէ և Տաճկաստանի մէջ ապահով ապրուստի միջոց մի ունին, արհեստ մի գիտեն, կամ հողի և կալուածի տէր են և հաստատուն եկամուտ կ'ընդունին, որք, մէկ խօսքով, եթէ ոչ բարօրիկ և նախանձելի գոնէ հանգիստ կեանք մ'ունին, հոն կը վաճառեն իրենց խանութ, արտ, կալուած, և կուգան հոս հողագործ և հողատէր լինելու, այսինքն հոս այդ-բեռնէն սկսելով 10-15 տարի աշխատելու որ Ամերիկայի մէջ լինին ինչ որ արդէն էին ի Տաճկաստան : Իրաւ է թէ ոմանք յաջողած են . հողատէր Մարգուսնցիներ կան այժմ Բալիֆոռնիայի մէջ . բայց նոքա արդէն հողատէր և բարօրիկ ընտանիքներ էին իրենց բնիկ երկրի մէջ ալ : Պէտք է նաև շնորհալ թէ այս երկրին մէջ 10 կամ 20 հազար թալէն ունեցող Հայերն իրենց մէջ թէ և հարուստ կը սեպուին Տաճկաստանի հաշուով, չեն իրօք հարուստ : Հոս 3,000 լիրան հարստութիւն չսեպուիր, միջակ վիճակ ալ չհամարուիր, այլ կը նկատուի իբր չնչին գումար, և արդարեւ ոչնչի պէս ալ կը ծախսուի կը սպառի : Բայց Տաճկաստանի միջնակարգ քաղաքացի մէջ 3,000 լիրայ և մինչեւ իսկ 1,000 լիրայ ունեցող դք հարուստ կը սեպուի : Եւ ոչ թէ վը սեպուի, այլ է արդարեւ հարուստ . նա այդ դրամով Տաճկաստանի մէջ այնքան զօրաւոր է որքան այս երկրի մէջ 50 հազար լիրաի տէր մարդն հազիւ է :

Ձեմք կարծեր թէ Բալիֆոռնիայի և ուրիշ ու ինչ նահանգի մէջ կայ Հայ մի որ բառին ամերիկեան առամաքն հարուստ կարենայ կոչուիլ, թէ և կան թերևս երկոտասանեակ մի Հայեր որոց համար կրնայ ըսուիլ թէ

«Լաւ նիւթական վիճակ ունին :»

Յիրաւի վերջին 6-7 տարիներու մէջ է որ մեր գաղթականաց մեծ մասն եկած են, բայց կան նաև ոչ սակաւք որք 10-20 տարիէ ի վեր հոս են, և աշխատած են բոլոր ուժով առանց մեծ յաջողութեան հասնելու : Պէտք է շնորհալ այն կարեւոր կէտն ալ թէ երբ ասոնք գործի սկսան, Ամերիկայի մէջ յաջողիլ աւելի դիւրն էր . արեւելեան ապրանքներն ներմուծուած չէին ահագին քանակութեամբ, դեռ գորգերն առանապատիկ գնով կը վաճառուէին իբրեւ հնութիւն : Այն հաղուագիւտ պատեհութիւններն վայելելով հանդերձ եթէ հարստութեան հասած չեն նոքա, հապա նորեկներն ի՞նչ բանաւոր յոյս կրնան ունենալ փայլուն յաջողութիւն ձեռք բերելու այսպիսի ժամանակաց մէջ երբ արդէն արեւելեան ապրանքի խնդրանաց բաւական գոհացում տրուած է և երբ այնքան բազմաթիւ վաճառականներ կան լրացունելու գոյացող թերին : Հայագրի վաճառականներու մասնց շրթունքէն բաւական գանգատ լսած եմք իրենց վիճակէն այն պատճառաւ որ արեւելեան գորգի վաճառականութիւնն շատ ինկած է այժմ և հետ գլխաւէ աւելի կ'իյնայ :

Մենք ամեն օր նորանոր առիթներ կ'ունենանք ցաւելու Ամերիկա դիմող Հայերուն վերայ . և անկեղծօրէն կը խորհիմք թէ շատերն մեծ անխոհեմութիւն կ'ընեն թողլով այն Հայրենի երկիրն ուր շնորհիւ երկաթուղեաց շինութեան՝ հողին գինն արագապէս պիտի բարձրանայ, վաճառականութիւնն ահագին դարկ պիտի առնու, և գործ ու դրամ պիտի առատանան : Փոքր Ասիոյ կամ Հայաստանի մէջ հող գնել պէտք է այժմ ոչ թէ վաճառել : Պէտք է որ մերազնեայք քաջ գիտնան թէ Ամերիկայի մէջ այնպիսի հող գտնել անկարելի է, թէ մեր բնիկ երկրին պարարտութիւնն, մեր պատուներու համար, մեր արօտներն, մեր ոչխարն, արջառ, կաթն և սեր գերադանց են, այնքան ընտիր որ նման չկայ ուրիշ ու ինչ երկրի մէջ :

Ինչո՞ւ ուրեմն այս անխոհեմ անհամբերութիւնն կը շարունակէ և մեր եղբայրներ ցնորական յոյսերէ մղողաւ՝ կը ցրուին իրենց օրհնեալ և աննման հողէն : Թող վստահ լինին թէ շատ տարի չանցած՝ Ամերիկայէն և Եւրոպայէն շատեր պիտի երթան Տաճկաստանի մէջ դրամ շահիլ :

Ողբալի բան է որ Հայն 4000 տարի այդ սքանչելի հողն պահպանած լինելէ յետոյ՝ այժմ աններելի թեթեւութեամբ կը թողու զայն երբ անկէ օգուտ լիարուռն քաղելու ժամանակն մօտ է : Միթէ վերջապէս օտարին ձեռքն յանձնելու համար այնքան տառապանք 40 դար փարած միացինք այն հողոյն, որոյ պանիրն, մսեղէնն, ցորեանն, ևն . ևն . աշխարհի մէջ առաջին և թանկագին պիտի հանդիսանան վաղիւ, և իշխանք ու մեծատունք իրենց սեղանի վերայ պիտի դնեն Հայաստանի գինին և պանիրն պանծանք :

Եղբայրներ, տեղերնիդ ամուր կեցէք

ՀՐԷԱՅԻ ԵՒ ԻՆՉՈՒՅ ԿԸ ՀԱՆՈՒՄՈՒՆ

Ռուսիոյ կառավարութիւնն որ մօտերս խիստ միջոցներ գործածելով կ'արտաքսէ Հրէայ ժողովուրդն իւր երկրի սահմաններէն, շատ դաշնայն և լրագրաց ուշադրութիւնը գրաւած է և սաստիկ քննադատութեանց տառարկայ եղած է :

Իմ դիտաւորութիւնս չէ այժմ Ռուսիոյ այս մասին նկատմամբ բռնած ընթացքը քննադատել իբր մի բարբարոսական արարք, զի այնպէս կը հաւատամ որ Ս . Փեթրսպուրիկի Դաշլիճն այնչափ նուրբ և լուսաւորեալ է, որչափ ուրիշ Եւրոպիոյ դաշլիճք . նա ունի քաղաքականութիւն մը որուն հետեւին իրեն արդարացի կ'երևի և իւր գահուն հաստատուն միալուծ և իւր ժողովուրդին բարեխաղութեանը համար ստիպողական է ,

այլ թէ՛ Հրէայք ինչո՞ւ ենթակայ են հալածանաց և արտաքսման :

Չենք կրնար այդչափ ուսմիկ ըլլալ և սղայական գաղափարաց յարիւ ըսելով որ նոքա իրենց կրօնքին կամ Քրիստոսն իսաչը հանելուսն համար կը հալածուին . քան զի յայտնի է որ Հրէական կրօնքն այժմու քրիստոնէական կրօնի մայրն կամ արմատն է և միանգամայն համայն քրիստոնեայ աշխարհն կը հաւատայ Փրկչի մի որ Հրէայ ազգն հայթայթած է , և Աստուծմէ այնպէս տնօրինեալ էր որպէս զի քրիստոնէական կրօնն գոյութիւն առնուր , յիշուի Հրէայ ժողովուրդն այդ մասին աւելի պատուոյ և յարգանաց արժանի ըլլալու էր քան թէ ատելութեան :

Անկողմնակալութեամբ եթէ քննենք , կը տեսնենք որ Հրէայք շատ լաւ յատկութիւն ունին որ բնական ձիրքեր եղած են և բոլոր քաղաքականացեալ կեդրոններին մէջ առաջնակարգ տեղ բռնած են իրենց վաճառականութեամբն , հարստութեամբն ևն . ևն : Այս իրողութիւնք ոչ ոք կրնայ ուրանալ :

Հրէայք ուր որ ալ երթան , իրենց ճարպիկութեամբ բնն աշխատասիրութեամբն և անտեսականութեամբն կը ստեղծեն հարստութիւն և բազաւաճում և հետեւորար բնիկ ժողովուրդն որ ընդհանրապէս չուայ և գուրկ է այս բարեմասնութիւններէն կը սկսի տեղի աւել : Հրէից մի գէշ բնաւորութիւնն է որ երբ արածութիւն և ազատութիւն գտնեն մի ժողովուրդ է , կը գործածեն զայն չարաչար և կը դառնան չափազանց դրամամոլ որ վերջապէս պատճառ կըլլայ բնիկ ժողովուրդին կասկածն ու նախանձն գրգռել և տեղի կուտայ նախասման , հալածման և արտաքսման :

Հրէայք առաջին անգամն չէ որ կ'արտաքսուին , իրենց նախկին պատմութիւնն ցոյց կուտայ որ երբ Եգիպտոսի մէջ բազմացան բոլոր ցորենի և այլ մենավաճառութիւնք ձեռքերնին անցուցին և Եգիպտացոց կալուածք սկսան մէկիկ մէկիկ հրէից ստացուածք լինիլ , այն ատեն Եգիպտացիք սկսան արթննալ և ելալ փարաւոն մը որ ոչ Յովսէփ կը ճանչնար և ոչ Իսրայէլ և ինչպէս յայտնի է այնչափ նեղուեցան որ վերջապէս Մովսէս իւր ճարտար քաղաքագիտութեամբն հանեց իւր ժողովուրդն Եգիպտոսէն և տարաւ Լիբանանու երկիրն : Հոն սկսան զօրանալ և զարգանալ և բաւական փառաւոր օրերու հասան , մինչև որ Հռովմայեցիք եկան և իրենց բարձրագոյն զինուորական կարգապահութեամբն զբաւեցին երկիրն և ցիր ու ցան ըրին Հրէայք . սոքա թափառեցան աստ անդ , և Մաւրերու ու Սարակինոսաց յաղթութեանց հետեւելով վերջապէս Սպանիա մուտք գտան և լաւ բնդունելութիւն գտնելով սկսան հարստացնել ու զարգացնել երկիրն . բայց աւաղ , հոս ալ ի գործ դրին իրենց ծայրայեղ դրամամոլութիւն , ժողովուրդն նախանձեցաւ և հալածանք մ'է սկսաւ . այնպէս որ դժբաղդ Հրէայք ամեն բան կորսնցնելով չուեցին դէպ ի արեւելեան երկիրներ , ինչպէս Տաճկաստան , Բոլոնիա և Ռուսիայ :

Ռուսիոյ տուած պատճառք նոյն ցոյց կը տան որ Հրէայք հոն ևս հարստացած և մեծ կալուածատեարք եղած են , այնպէս որ բնիկ ժողովուրդն նախանձելով այժմ ինչ ինչ պատրուակաւ կ'արտաքսեն Ռուսիայէ : Ինչպէս կը լսենք , դրամատեարք Բոլշայլոտ և Հըրը նման Մովսիսու արամադիր և «դրամատէր» են առաջնորդել գանդն և նոր աշխարհի այլ և այլ հանրապետութեանց մէջ տեղաւորել . բայց վերջը ո՞ւր : Ինձ չատ հաւանական կ'երևի որ պատմութիւնն պիտի կրկնէ իւր արարք :

Ինչպէս վերը յիշեցինք մի գլխաւոր պատճառն է իրենց հալածանաց չարազանց դրամամոլութիւնն . բայց ուրիշ մեծ պակասութիւն մի ևս ունին որ միշտ կը մոռցուի ուշադրութեան առարկայ ընելու , որ կարծեմ ընթերցողք կրնան գուշակել . իրենց ինքնապաշտպանութեան տաղանդն ու սիրտն չունենալին է որ միշտ անձնատուր կ'ըլլան հալածանաց . չեն ուզեր իրենց իրաւանց

և գոյութեան համար կեանքերնին տալով մրցիլ :

Ինչ սքանչելի օրինակ մի ցոյց կը տան այս մասին Ամերիկայի հնդիկներ , մինչև անգամ անցնալներն մի քանի հարիւրէ բաղկացեալ ցեղ մը , լաւ գիտնալով որ ունին 60 միլիոն ժողովուրդ իրենց դէմ , որոնք ունին ամեն դիւրութիւն , հռչակեցին պատերազմ , կռուեցան իրենց գոյութեան և իրաւանց համար , զարկին , զարնուեցան և կրնանք ըսել , յաղթեցին , ստանալով աւելի ուշադրութիւն կառավարութենէն :

Հրէայք ըստ իմ համոզմանս պիտի թափառին յաւատել մինչև որ պատերազմական ժողովուրդ մը չլինին :

Արդ՝ Հայ ազգն ինչ վիճակի մէջ է Հրէից հետ բաղդատմամբ , կը թողում ազնիւ ընթերցողաց պատասխանել իրենք իրենց սրտին :

Պրուքլին , Յունիս 29 , 1891

Գ . ԳԱՍՊԱՐԵԱՆ

Հետեւեալն է Կալկաթայի Հայկական Ընկերակցութեան Կանոնադրութիւնն , գորկը հրատարակեմք «Հայք» ի մէջ ոչ լոկ ի տեղեկութիւն այլ և իբրեւ օրինակ քաջ կազմակերպութեան , յորմէ կրնան օգտուիլ ուրիշ ընկերութիւններ :

ԳԱՅՈՒՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Հաստատեալ ի 1890

Ի

ԿԱԼԿԱԹԱ

(1.) Այս ընկերութիւն պիտի անուանի ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱԼԿԱԹԱՅԻ .

(2.) Ընկերութեան նպատակն է յառաջացումն շահուց և զարգացումն բարօրութեան Հայոց որ ի Հնդկիս , ի Հայաստան և այլուր :

(3.) Ընկերութիւնն պիտի բաղկանայ անդամոց հետեւեալ դասերէն . —

(ա.) Սովորական Անդամք , Դաս Ա .

(բ.) Սովորական Անդամք , Դաս Բ .

(գ.) Անդամք ցկեանս .

(դ.) Թղթակից Անդամք .

(ե.) Պատուոյ Անդամք :

(4.) Ընկերութեան գործոց մատակարարութիւնն և վարչութիւնն պիտի կատարուի ի ձեռն երկու ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱՆՄԵՈՑ , իւրաքանչիւրն 6 հօգիէ բաղկացեալ , և ԾԵՐԱԿՈՒՏԻ մի՝ 1 ընդհանուր նախագահով և 7 անդամօք , ունենալով գործնաւոր հանգամանս և ի գործ դնելով այն իրաւունք և պարտք որ ի ներքոյ մանրամասնեալ են . նոքա պիտի ընտրուին Ընդհանուր Ժողովոյ մի մէջ :

(5.) Ոչ ոք որ չէ Հայ ծնողի կամ ծնողաց զաւակ՝ կրնայ ընտրելի լինիլ Յանձնախմբոց կամ Ծերակուտին համար :

(6.) Ամեն անդամ որ կ'ընտրուի Յանձնախմբոց կամ Ծերակուտին համար , պարտի լինիլ Բ . Դասու Անդամ մի , կամ ցկեանս Անդամ , կամ առ նուազն 250 Ռ . ի նուիրատու :

(7.) Յանձնախմբոց և Ծերակուտի անդամքն կարգաւ և երկուական դուրս պիտի ելնեն ամեն մէկէն , իսկ Ընդհանուր Նախագահն և Ծերակուտի Քարտուղարն դուրս պիտի ելնեն ամեն երկու տարին մի անգամ : Սակայն այս կերպիւ դուրս ելնող ամեն անդամ վերընտրելի պիտի լինի նոր ընտրութեանց համար :

(8.) Իւրաքանչիւր Գործադիր Յանձնախմբում պիտի բաղդկանայ մէկ Ատենապետէ , մէկ Փոխ-Ատենապետէ , մէկ Քարտուղարէ և մէկ Գանձապետէ , նաև մէկ Խորհրդէ որ պիտի բաղկանայ մնացեալ երկու անդամներէն և , իբրեւ խորհրդատու , Ծերակուտի և Գործադիր Յանձնախմբոց Փոխ-Ատենապետներէն :

(9.) Ծերակուտի ամեն նստին մէջ , Գործադիր Յանձնա-

խմբոց փոխ-ատենապետներն, կամ իրացակայութեան նուցա՝ մէկ անգամ իւրաքանչիւր Յանձնախմբէ, իրաւունք պիտի ունենան վիճարանութեան և քուէարկութեան մասնակցելու :

(10.) Երեւոյան պիտի յօրինէ իւր կանոնադրութիւն և կարգէ իւր պաշտօնակալներ բաց ի նախագահէն . պիտի քննէ Գործ . Յանձնախմբոց արարքն և հաշիւներն և ի հարկին պիտի խորհրդածէ և որոշումներ տայ Ընկերութեան շահուց վերաբերեալ ու և իցէ նիւթի վրայ, և պիտի կրնայ հրահանգ տալ Գործ . Յանձնախմբոց ի գործ դնել այդ որոշումներ՝ որք չեն հակառակիր ներկայ կանոնադրութեան . նաեւ պիտի խորհրդածէ և հրահանգ տայ վերաբերութեամբ պաշտօնական թղթակցութեանց ընդ կառավարութիւնս, ինչ որ ի գործ դնել պարտաւոր պիտի լինին Գործ . Յանձնախմբոց, սակայն իրաւունք չպիտի ունենայ Յանձնախմբոց գործադիր արարքներուն խառնուելու . և ոչ ալ իրաւունք պիտի ունենայ սկսելու կամ յաւաք տանելու Յանձնախմբներէն անկախարար՝ ու և իցէ թղթակցութիւն կառավարութեանց հետ :

Հարաւանկել

ԵՄԵՐԻՎԵՆԸ ԲԱՐԻ

Մեր նախորդ թուով կ'ըսէինք թէ Ամերիկա դերազանցապէս ծանուցման կամ հրապարակութեան երկրին է : Կարելի է ըսել թէ այս ծանուցմունք որքան քանակի նոյնպէս տեսակի կողմանէ տարօրինակ են :

Պիտի զարմանան ընթերցողք եթէ ըսենք թէ Նիւ Եորքի մէջ երբէք տեսակ չեմք «լաւ սուրճ» «ընտիր աճառ», «պատուական գարեջուր», «աղէկ գինի», «օգտակար դեղ» : Օտարականն վայրապար պիտի փնտռէ, և Ամերիկային պիտի արհամարհէ այդ լաւ բաներն : Հոս որ կողմ որ դառնաս կը տեսնես «լաւագոյն գարեջուր» «արտաքոյ կարգի ընտիր», «անբաղդատելի կերպով պատուական», «կօշկաց ընտրելագոյն», «իտէական», «առաջնակարգ», «անզուգական», «աշխարհահռչակ», «տիեզերածանօթ», «քան զամենայն օգտակարն որ երբէք գտնուած է» :

Եթէ գործարան է «ընդարձակագոյնն է յաշխարհի» եթէ ձեռնարդար մ'է «Ամերիկայի առաջին ձեռն-յարդարն» է : Ժամագործ մի անցեալներ իւր խանութի ճակատ գրած էր «լաւագոյն ժամագործն աշխարհի մէջ» : ուրիշ ժամագործ մի նոյն փողոցում հաստատուելով՝ գրել տուաւ «լաւագոյն ժամագործն այս փողոցին մէջ» :

Միանգամ գնացինք լսել բժշկի մի գիշերային բախախօսութիւնն, զոր կուտայր մեծածախ հանդիսաւորութեամբ Նիւ Եորքի մեծագոյն սրահաց միոյն մէջ : Նիւթն էր իւրահնար մէկ դեղն, որոյ զարմանալի յատկութիւններն կը հռչակէր՝ բաղադրութեան գաղանիքն իրեն վերապահելով : Ծանուցման կամ հրահանգի տոմսակին վերայ ըսուած էր թէ այս դեղն «ընդունած են բոլոր ժիշկներն, Մամուլն և ժողովուրդն իբր մեծագոյն բժշկական գիւտն այս դարուն, և իբր լաւագոյն համայն ջղային զօրացուցիչ գեղերու որ երբէք գիտցուած է» :

Դարուս Մեծագոյն գիւտն, կարծէինք թէ այն կապակցութիւն ունէր Փաստէօսի, Լիւթէրի, Քլօտ Պէռնաուի, և կամ ալ մեծ բժշկի անուան հետ, բայց այնպէս չէ եղեր : Ծիծաղեցանք կուշտ ու կուռ այս անհեթեթ յաւանակութեան վերայ, բայց ամերիկեան ունկնդրաց բազմութիւնն, այլանդակ անձնագովութեանց վարժուած, չէր թուէր զուարճանալ մեզի չափ : Կը հաւատամք ալ թէ այս յանդուգն անձնագով լիարուռն օգուտ քաղեց իւր ծաղրելի բանախօսութիւններէն : Այս երկրի ժողովուրդը ձկնային աղահաւթեամբ իրարու խայծէն կը բռնուին . ձկնային ո՛չ ապշութեամբ ալ ագահութեամբ՝ կ'ըսեմք :

Երբ կը մտածեմք թէ ո՛րքան հոգ կը տանին ծա-

նուցումներն համոզիչ և ճարտար ընելու, կը չափաւորի մեր զարմանք ժողովրդեան առեւելոյթ պարզմտութեան մասին : Անցեալ օր կօշկի վաճառանոցի մի շրջաբերական տեսարան ըստ մասին կարգացի, յորում բնախօսութեան ոչ անտեղեակ գրիչ մի կը փաստաբանէր թէ այն վաճառատան կօշիկներն են ձեռք բնական և առողջապահիկ կանոնաց համաձայն :

Շարագրութիւնն վարպետի գործ լինելէ զատ, ծանուցումն ուշագրու է նաեւ արտաքին սանգամանօքն : Ծանուցումներն են պատկերազարդ, գունագեղ, ախահաճոյ, և հրապարակային տեղեր կը փակցուին երբեմն նոյն տեսակէն քով քովի յիտուն, հարկւր և աւելի : Կըրնա՞ն անցնիլ այն կողմէն և չտեսնել ծանուցումն :

Նաեւ մեծ հոգ կը տանին նոյն ծանուցումն նորաւոր ձեռք ներկայացնելու : Գիտեն վաճառականի հոգեբանութիւնն, և չեն թողուր որ ժողովուրդն կարենայ ըսել «աս տեսանք արդէն և բազում անգամ» : Այս ինչ գեղային բաղադրութեան ծանուցումն տարիներէ ի վեր կը փոփոխեն, նոր պատկերով, նոր խօսքերով կը դնեն իբր թէ նոր բան մի լինէր . այսպէս ամէն ոք կը նայի, և կ'ընթեռնու ծանուցումն : Այն մասնաւոր ծանուցումն որում կ'ակնարկեմք, յոյժ զուարճալի երեւոյթ մ'առած է այս անգամ . պատկերին մէջ կան շուն մի և կատու մի նստած քով քովի, որոց կողմանէ որպէս թէ կ'ըսէ արձանագրութիւնն . «մեք համաձայն եմք թէ . . . լաւագոյն զօրացուցիչն է» : Ալ ի՞նչպէս չես համոզուիր :

ԱՄԱՌՆԱՅԻՆ ՕԴՆ

(Շար. տե'ս թիւ 14)

4. Երբ օդն շատ սառ է, մեք աւելի դիւրաւ պող կ'առնումք : Այս բացատրութեան կարօտ է, այնպէս չէ՞ : Ամառն մեր մորթ կամ կաշին մեծ գործունէութեամբ պաշտօնն կը կատարէ քրտինքով և չոգիացուցմամբ դուրս քաշելով մեր ներքին ջերմութեան մէկ մասն : Արիւնն մեծ առատութեամբ դուրս կուգայ մորթին մէջ կը տարածուի՝ ինքզինք զովացունելու համար, ճիշդ ինչպէս որ մեք ներքին բնակարաններէն դուրս կ'ենենք օդին մէջ զովութիւն խնդնելու համար : Երբ մորթին մանր մանր ծակերն, իբրեւ փոքրիկ պատուհաններու անհամար բաղմութիւն, ներքին ջերմութիւնն դուրս կուտան քրտինքով, մեք ալ կը փորձուիմք մեր զգեստներն թեթեւցունել, պատուհանին առջև նստիլ . հովին դիմաց կենալ, շատ պող ջուր խմել . նաեւ ցայգ կը բանամք և բաց կը թողուիմք պատուհաններն (զորս փակող չկայ երբ առտուան դէմ օդն շատ զովացած կը լինի), կարի թեթեւ կերպով կը ծածկուիմք երբ ի քուն կը լինիմք : Խնդրոյն դժուար կեան այն է որ այս ամեն բաներն այսպէս ընել բնական է, լաւ է, բայց չափ մի կայ, զոր պարտ է զգուշութեամբ յարգել : Եթէ այս ինչ աստիճանն անցնիմք, մորթին երակներն առաւել քան զչափն կը սեղմուին, արիւնն մեծ քանակութեամբ ներքին գործարաննէ բըն կը կոխէ, և ահա կարգ մի անհանգստութիւններ և անհարթութիւններ յառաջ կուգան :

5. Ամառ եղանակին ուտելու և խմելու անկանոնութիւններ շատ կը պատահին : Տաք օդին պահանջմանց համեմատ սնունդ առնուլ չեն գիտեր շատեր : Պէտք է յիշել թէ կերակրոյ մեծ մասն մեր ներսի դին իբրեւ կրակ ծառայելու պաշտօն ունի, և որովհետեւ ամառն նուազ ջերմութիւն կը սպառեմք, պէտք է որ նաեւ նուազ ուտեմք քան ձմեռն : Ախորժակն չափերուն լուր կուտայ, բայց քիչերն կը հասկնան : Կաթնիկեր մանկանց համար այս վտանգն աւելի մեծ է, վասն զի նոքա կը պօռան երբ արօթի են, կը պօռան նաեւ երբ ծարուի են . մայրն ալ ամեն անգամ կաթ կուտայ՝ չմտածելով թէ աղուն ճիշն միշտ անօթութեան նշան չէ : Այս պատճառաւ մանկանց ումանց մարսողական գործարաններ չափազանց կ'աշխատին և կը յոգնին, և փոքր առթի մի, պաղ

առնելու կը սպասեն փորձելու սկսելու համար: Չմոռնանք պտուղներն ևս յիշել որ թէ և շատ լաւ ուտելիք և թե-
թեւ սնունդ են՝ ամառնային եղանակին յարմար, բայց
այն պայմանաւ որ տեսակն լաւ և քանակն չափաւոր լի-
նի: Պտուղ մի կրնայ վնասել ահաւ լինելով ինչպէս նաև
ընդհակառակն՝ չափազանց հասուն կամ փառած լինելով:
Պէտք է որ պտուղն հասուն լինի և միանգամայն թարմ:
Քաղքէ քաղք տարուելով, ամանէ աման դրուելով ճմ-
լուած և զառամած պտուղներն ուտուելու բան չեն:

Պանդուխտ Հայերուն համար մասնաւոր վտանգ-
ներ կան այս մասին: Նոքա Հայաստանի, Փոքր Ասիոյ կամ
կիլիկիոյ ընտիր պտուղներն վայելած լինելով՝ պարզ-
մտութեամբ կը կարծեն թէ ամեն ուր որ գողթեն նոյն-
պիտի միջոցն պիտի գտնեն: Սոքա ընդհանրապէս օտար
մրգեղինաց համէն, այսինքն անհամութենէն կը հասկնան
թէ նոյն բանն չեն, և շատ չեն սիրեր ի սկզբան. բայց
կամաց կամաց կը վարժուին և կ'ուտեն: Չմերուկին կար-
միր գայնն և ջրոտ երևութիւն կը հրապուրէ զիրենք: Եւս-
ման, խնձորներն, դեղձերն, ծիրաններն թղթի մէջ
կիսովի փաթաթուած և վայելչապէս շարուած՝ հաճելի
են աշայ, բայց ոչ Հայ քմաց:

Պէտք է սակայն մտածել թէ այս օտար և այն
Հայկական պտուղ միջեւ տարբերութիւնն լոկ համի տար-
բերութիւնն չէ: անոնց բազմաթիւութիւններն ալ տար-
բեր են, և համի աղբարար նշան մ'է միայն ներքին և
խոր տարբերութեան: Ինձ գանգատած են շատ Հայեր
թէ ձմերուկ ուտելով, և ան ալ շատ չուտելով, թանջք
կամ գէշ անոակէ փորլուծութիւն ունեցած են. նոյն
գանգատն Ֆռանսացիներէ ևս լսած եմ:

Թողունք պտուղներն, նոյն իսկ կաթն զոր առհա-
արակ կը գործածեն Նիւ-Յորքի մէջ, չէ բնաւ ինչ որ
Հայն «կաթ» բառով կ'իմանայ: Կաթն յաճախ խարդա-
խեալ է, և ո՛չ միշտ ջրով: խարդախեալ լինի թէ մկր-
տեալ կամ գուտ և մաքուր, Ամերիկայի կաթն Հայաս-
տանի կաթէն շատ տարբեր է. ոչ նոյն համն ունի, ոչ
նոյն զօրութիւնն. և որ յոռեգոյնն է՝ շատերուն փոր-
հարութիւն կը պատճառէ հանգերձ սաստիկ ցաւով:

Գանք ջրոյ խնդրոյն, որ շատ էական է: Պանդուխտ
Հայերն իրենց Հայրենի երկրին ցուրտ և մաքուր ջրերն
խմելու վարժուած լինելով՝ Ամերիկայի մէջ կը կարծեն
կամ կը ստիպուին անոր տեղ գործածել սառուցով ջուր:
Ո՛րքան քիչեր կ'երեւակայեն թէ սառով ջուրն փառա-
կար է. վասն զի սառածքն կը պաղեցունէ, անոր երակ-
ներն սեղմելով մարմնեցոյիչ հեղուկին թորումն կ'արգե-
լու և մարտողութիւնն կը խանգարէ. այդ ջրէ շատ խը-
մողներն պէտք է փորձն առած լինին թէ ինչպէս կ'ու-
տին և անհանգիստ կը լինին կերակրէն յետոյ: Նաև ինչ
գիտեմք թէ սառուցն, զոր ջրոյն մէջ լուծած կը խմեմք,
ուր չլինուած է, ինչպիսի ջուր է որ սառած է, ինչ ա-
մաններու մէջէ անցած է. սառուցի կտորներն կրնան
շատ վնասակար նիւթեր և ախտաբեր մանրէներ պարու-
նակել, ինչպէս ժանտաւանդի մանրէն, որ ստամոքսին
մէջ աւաքնալով կրնան զարգանալ և աղեսաց մէջ անցնե-
լով իրենց շարիքն գործել:

Շատ բաներէ պարտի հրաժարիլ պանդուխդ Հայն
եթէ չուզեր թունաւորուիլ կամ հիւանդանալ, և այն
բաներն ալ յորոց կարելի չէ հրաժարիլ, պարտի գոր-
ծածել մասնաւոր գզուշութեամբք:

(Հարո-նակէլ)

ՆԱՄԱԿ ՆԻԻ ՀԵՅՎՐՆԵՆ

«ԱՐՄԵՆԻԱ» լրագիրին 86դ. թիւին մէջ կարգա-
ցի Պոլսէն գրուած նամակ մը, որուն մէկ քանի կէտե-
րուն վրայ հասարակութեան ուղադրութիւնը հրաւիրել
հարկ կը համարիմ:

Նախ ցաւ կը յայտնեմ որ թղթակիցը թղթակցի
սրաչտօնին անհաւատարմի և ինքն իրեն անիրաւ գտնը-
ւեր է: Իր դատը որոշ և վճիռը խիստ ծանր է. «Ամե-
րիկայի մէջ հրատարակուող Հայ լրագրութեան մին Նազըմ
Պէյի ստղծեցուցած էնթրիքներուն գործիք» դարձեր է,
«անոնց փողը կը չալէ, և վասակի մը դերը յանձն ա-
ռած է»:

Ամբաստանութիւնը ծանր, բայց հիմը խախտու է.
«եղեր»ով, «ճնշ» չենք գիտեր»ով խառնուած է լուրը:
Թղթակցին մեծ թեթեւութեան նշան է այս:

Դարձեալ, թղթակիցը քանի որ կ'ըսէ թէ «գի-
տութեամբ թէ անգիտութեամբ, այդ դեռ ճիշդ չենք
գիտեր» պէտք է չըսէր թէ «անոնց» փողը կը չալէ.
վասնզի եթէ «անգիտութեամբ» է, ինքն իր փողը չա-
լած կ'ըլլայ, և յանձն առածն ալ վասակութիւն չըլլար
այլ հեղինակութիւն: Մարդ մը գործիք չէ եթէ բան

մը կ'ըսէ և կ'ընէ, և անգէտ է որ ադ բանը ուրիշի մը
գործին կը ծառայէ: Նաև, մարդ մը վասակ չէ եթէ
բայ ու բացարձակ աշխարհին կը գրէ, ազգին խելքին
ու խղճին կոչում կ'ընէ այս ինչ խնդրոյ համար, որ ի-
րեն ազգագուտ կ'երեւի, թէ և ոմանց անհաճոյ երևնայ:
Թղթակիցը պէտք է գիտնար «Գործիք» և «վասակ» բա-
ռերուն միտքը:

Երկրորդ, աւելի ցաւ կը յայտնեմ թղթակցին ար-
գիտութեան համար, վասնզի ինչ որ ուրիշի մի համար
ըսել կ'ուզէ, ինքն իրեն համար կը խոստովանի: Իր նա-
մակին իմաստը սա է թէ Ազգին բարեկուտութեան հա-
մար ջանացող «Հայոց Հայր» Միութիւնն՝ անունով ըն-
կերութիւնն մը արդէն կայ. ուրիշ մ'ալ ելեր է «Աս բա-
ւական չէ» կ'ըսէ, «բոլոր Հայեր պէտք է միանան»: Եւ
սա է վասակութիւն: Ինչո՞ւ վասակութիւն կ'ըլլայ եղեր
աս. չըսեր թղթակիցը, մենք ալ փնտնեցինք, և չկը-
ցանք գտնել: Արդեօք Միութիւնն մը կազմելու ջանքն է
վասակութիւն: Ադ չկրնար ըլլալ, քանի որ թղթակիցը
«Հայոց Հ. Միութիւն»ը գովելով միութեան սկզբունքը գի-
ված կ'ըլլայ: Արդեօք ընդարձակ և ընդհանուր միութիւն
մի կազմել ուղեւուն մէջ է վասակութիւնը: Բայց ատ ընդ
հանրական հանգամանք արդէն ինք կը պահանջէ «Հայոց
Հ. Միութեան» համար. եթէ «Հայք» ի խմբագիրը վասակ
ըլլայ անանկ միութիւնն մը ինչդրելուն համար, «Հ. Հ. Մի-
ութիւն»ը կազմող անձը ուրեմն շատոնց վասակ եղած է:

Արդեօք թղթակիցը դէմ կը խօսի վարկաբանութեան
նոր և մեծ Միութիւնն մը կազմուելով արդէն կեցածին
կործանման պիտի ծառայէ: Բայց ատ ալ բանաւոր չե-
րեաւ քանի որ յոյս չունի, կ'ըսէ թէ Հայերը «իրերե-
թէ այդ թափառաշրջիկ անծանօթներուն անունովը պի-
տի միանան իրարու հետ»:

Ո՞վ չգիտէ սակայն թէ ատ Միութեանն դուրս է
Հայ Գաղթականութեան մեծ մասը: Ուրեմն ո՞րը վասա-
կութեան կը նմանի, պզտիկ ընկերութիւն մը մեծցնել
և ազգին պիտայից համապատասխանող վիճակի հասցնե-
լու աշխատիլն, թէ ատ պզտիկը իւր անգոր վիճակին
մէջ պահելու աշխատիլն է:

Երրորդ, ցաւ կը յայտնեմ թղթակցին նախապա-
շարեալ և անձուկ մտքին համար: Թղթակիցը մեծ մի-
ութիւն մը հիմնելու կողմէն ըսուած փաստերը հերքե-
լու ուրիշ ճար չգտնելով, մտածեր է աս ճարը, որ ըսէ
թէ Նազըմ Պէյ է ատ բանը ուղղող, որպէս զի ժողո-
վաւորը ըսէ թէ, քանի որ Տաճիկ է ըսողը. ուրեմն աս
բանը գէշ է: Արդեօք քանի՞ մարդ կայ որ թղթակցին
ուղածին պէս տրամաբանէ: Առաջարկութեան մը աղէկ
կամ գէշ ըլլալն ինչպէս կը դատեն մարդիկ, առաջար-
կութիւնը քննելով թէ առաջարկողը: Նազըմ Պէյը մե-
զի անծանօթ է, և չգիտենք ալ թէ նա երբեք առաջար-
կած է ասանկ միութիւն մը: Բայց եթէ ստոյգ գիտնա-
լինք թէ Նազըմ Պէյ ատ կ'ըսէ և ատոր համար կ'աշխա-
տի, մենք պիտի ուրախանայինք, և պիտի ըսէինք թէ
կամ գէշ ըլլալ մեզի աջակից է եղեր, կամ մեր փողը կը
չալէ: Պիտի ըսէինք թէ փրկութիւնը մօտեցեր է քանի
որ Հայաստանի Աստուածը մեր թշնամիներն անգամ մեր
գործը յառաջ տանելու կը գործածէ:

Եւ իբրեւ ազգասէր, աւելի կը վարկաբան «Արմէնիա»
ի թղթակցէն քան թէ Նազըմ Պէյէն. և իսկայի թշնա-
մին անմիտ բարեկամէն աւելի լաւ է կրտսի:

Նիւ Հէյվըն Յուլիոս 23, 1891

ՀԱՅ ՈՐՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

ՀԱՅԻ ԿԵԱՎՈՒՐ

Գրելով Կ. Պոլսէ առ Ֆռանսակոն թերթն Փարի-
զեան «L'Observateur» կ'ըսէ, Գուր Գափուրի դէպքին
պատմութիւնն նորէն յիշեցունելէն յետոյ. — «Հայերն
այս բարբարոս երկրէն փախչելու իսկ թոյլտուութիւն
չունին: Երէկ հեռագրեցի Չեզ թէ Տրապիզոնի վալին
հարիւր Հայեր արգելած է նիկէր շողեհաւն մանելէ:
Արդարութիւնն կը պահանջէ սակայն ըսել թէ միայն
Հայերն չեն այս բռնապետական գրութենէն նեղուողնե-
րն: Անցեալ օր Համիտ Պէյ անուն թուրք մի, և կայսե
րական «օտալիք»ներէն մի քանին, իրրեւ դահաժառանգ
Րիշիտ էֆէնտիի կուսակից կասկածուելով, նաւն մըս-
ցուած են գիշերայն և զրկուած են և ճամբուած են դէպ
անծանօթ կողմ մի:

— Օհիոցի Հարի երիտասարդ մի, 28 տարեկան, մե-
ռած գտնուեցաւ անկողնոյն մէջ անցեալ օր: Դիակնու

Թիւնն կատարուելով՝ բժշկաց ձեռամբ հասկցուեցաւ թէ սիրտն անդամալուծեալ է եղեր ի պատճառս չափազանց ծխելուն:

— Յուլիս 4ին Պուա սը Պուլօնները մէջ, ի փարիզ, տեղի ունեցաւ Ամերիկացւոց և Ֆրանսացւոց միջև ըմբռնական մրցանաց հանդէս մի, յորում Ամերիկացիք բոլոր մրցանակներն առին: Այս մրցանակներ առնելու յաջողող Ամերիկացիներուն մէջէն մին 5 տար 11 մասնաչափ դէպ վեր ցատեց, ուրիշ մի 22 տար 5 մասնաչափ դէպ յառաջ ցատեց, դեռ ուրիշ մի 120 եարտախ պոռոյս մ'ըրաւ 18 երկվայրկեանի մէջ:

— Մի քանի նորաշէն ահագին թնդանօթներ և անծուխ վառող առաջին անգամ լինելով Յուլիս 24 և 25ին փորձուեցան Նիւ Եորքի մօտ, ի Սէնտի Հուք: Մինչեւ 50 փառնա վառողով թնդանօթ մի լեցուցին, որով 300 փառնա կշռող ուռմբն երկվայրկեան 2,162 տար արագութեամբ արձակուեցաւ: Հաւարակ վառողէն առաւել քան 130 փառնա պէտք է չնէլ նոյն տրդիւնքն յառաջ բերելու համար: Աւելի մեծ թնդանօթ մի գործածուեցաւ, որոյ փողն 12 մասնաչափ տրամագիծ ունի: Այս թնդանօթին գծուար մասերէն սմանք Ֆրանսայի մէջ չինուած են, բայց կըսուի թէ յաջորդ հասն ամբողջովին պիտի կրնան չինել Ամերիկացիք: Ծանրութիւնն է 52 թոնելաթո, երկայնութիւնն է 36 տար: Այս թնդանօթով 1000 փառնա ծանրութեամբ ուռմբներ արձակեցին: Այս թնդանօթք նաւային են, Միացեալ Նահանգաց նաւային զօրութիւնն արագապէս կը զարգանայ:

ՌՈՒՍԻԱ ԱԶԲ ՌԻՆՊ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս խորագրով յղուած մի կը հրատարակէ Տիար Սգայն փիսթիցի Յուլիս թուոյն մէջ, որմէ կ'առնուիմք հետեւեալ հասուածներն. —

«Տարակոյս չկայ թէ Ռուսիա շատ ուրախ պիտի լինէր Պափորն ու Տարաւանէն առնուլ. բայց կայսրութիւն մի որ Եւրոպայի կէսն և Ասիոյ մէկ երրորդն ունի՝ կարօտ չէ աւելի հոգայ: Մեք, Ամերիկացիք», կ'ըսեմք աշխարհի թէ աւելի հոգի ախորժակ չունիմք, վասնզի մեր սահմանաց մէջ երկարատեան տարածուելու բաւական տեղ կայ: Ռուսիոյ մակերեսն առաւել քան երկրպատիկն է Միացեալ Նահանգաց, և ինչուն պէտք է որ իւր սրբուց տրեան մէկ կաթիլն իսկ թափէ օտար երկիր դըրաւելու համար, մինչ ամեն տարի գաւառ մի կ'աւելնայ արդէն իւր սահմաններուն ներսն:

... Մասնաւորապէս Հայաստանի նկատմամբ Ռուսիոյ կացքն լաւ բացատրուած է Ռուս բարձրաստիճան գինուարականի մի կողմանէ առ Լ'Ա.Ռ.Մէնի ուղղեալ նամակի մի մէջ, յորում կ'ըսէ. «Ռուսիոյ թշնամիք կը պնդեն թէ այս երկիրն սիրով չպիտի նայի Տաճկահայոց ինքնօրինութեան: Այդ գրաւարտութիւն մ'է Պետութեանց ոմանց նախանձէն ծնած: Ռուսիա այնքան ընդարձակ, այնքան հզօր է և այնքան քնիստանեայ որ չի կրնար չնպաստել դժբաղդ Հայոց ազատութեան, ինչպէս ուրիշ տաճկահայտակ քրիստոնեայ ժողովրդոց ազատութեան համար արդէն ըրած է: Իմ կարծեօք Անգլիոյ և Ռուսիոյ միջև հասկացողութիւն մի բաւական կը լինի բռնադատել թուրքերն դադար տալու իրենց անգութ հալածանաց, մինչև անգամ եթէ միւս աշրութիւնք շարունակեն միալ անտարբեր Ձեր ժողովրդեան նկատմամբ, որ աներկբայ արժանի է լաւագոյն բաղգի մի:»

Հետեւեալ ծանուցումն Ռուսիոյ «Օտէսա» քաղաքէն մեզ յղուած է ի հրատարակութիւն:

Խնդրում եմ Ամերիկայի Պանդուխտ ազգայիններին, որոնք Օտէսա եկած և ինձանից ճանապարհածախս առած են, «ՀԱՅՔ» ի խմբագրութեան վճարել և ընկալադիր առնել իմ կողմանէ երկու օրինակի համար:—

Եղեսիացի ՅԱՐՈՒԹԻՆ ՄԱՏՈՒՐԵԱՆ

ԲԱՌԳԻՐԲ ԳԱՂՂԻԵՐԷՆ - ՀԱՅԵՐԷՆ
ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ
ԵՒ

ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընտիր թղթի վրայ, մերձաւորապէս 1300 ձեւով, մեծագիր քառածալ, մօտ 300 թերթերէ բաղկացեալ: Ի վերջ երկրորդ Հատորին՝ յաւելուած Հայերէն — Գաղղիերէն Բառագրոց:

ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻՔԱՋՈՒՆԻՈՅ
Լոյս տեսած է Առաջին Հատորն, 150 թերթ, 627 գեղեցիկ ձեւով: Բացուած է բաժանորդագրութիւն երկու Հատորին 'ի միասին:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Կանխիկ վճարումն բաժանորդագրոյ երկու Հատորին 'ի միասին:

Բ. Բաժանորդագրին է ֆր. 50 (20 ուրլի):

Գ. Բաժանորդագրութիւն կը շարունակուի մինչ զվերջ 1891 տարւոյս:

Դ. Բաժանորդագրութեան պայմանաժամն աւարտելէ յետոյ՝ գինը պիտի բարձրանայ:

Ե. Բաժանորդագրուողք պիտի ընդունին անդորրագիր 'ի վարչութենէ Տպագրատան՝ դրամոց ստացման մասին:

Զ. Բաժանորդագրուողք պիտի ընդունին Առաջին Հատորն անդորրագրին հետ 'ի միասին. իսկ երկրորդ Հատորն՝ այն ինչ տպագրութիւնն աւարտի:

«Հայք» ի Խմբագրատունն, յատուկ հրաւիրմամբ Վենետիկոյ Միթարեանց Տպարանապետին, Բաժանորդագրութիւններ կ'ընդունի Հ. Քաջունոյն բառարանին և Հ. Սլիշանի գրքերուն համար, ինչպէս նաև «ԲԱՊՄԱՎԷՊ» Հանդիսարանին համար:

ՓՈԽՆԵԿԵԳԻՐ

ԵՒ

ՆԵՒՍՏԱՆ

Ութ տարուան փորձառութիւնն կ'ապահովէ հասարակութիւնն թէ մեր փոխանակագրեր են ամենաժամանակաւոր թուրքիոյ ամեն քաղաքաց համար, կիզրոնատեղիք ըլլալով Խարբերդ և Կ. Պոլիս: Նոյնպէս կրնամք դրամ զրկել Եւրոպա ուր որ ուզուի պանգայի միջոցով: Նաև գոհացուցիչ գներով առմասկ կը վաճառեմք Ամերիկայէն Եւրոպա, Եւրոպայէն Ամերիկա ճամբորդելու համար, նոյնպէս Թուրքիոյ ամէն նաւահանգիստներէն դալու և երթալու համար Թրիէսթի ճամբով: Նամակներու անմիջապէս կը պատասխանուի: Պէտք է գիմել կամ դը ել ինձ այսպէս M. S. T. Nahigian, Worcester Mass.

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուի խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱՐԻԷԼԵԱՆ